ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ
« 12 » 05 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000039

Ձեռնարկողը՝ ***«Սահակյանշին» ՓԲԸ***
Ք. Երևան, Արարատյան 117/1

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 12/5, 13, 39, 39/1, 39/2, 39/3, 39/4, 39/5 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի և հասարակական համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000039

<12> 05 2020թ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 12/5, 13, 39, 39/1, 39/2, 39/3, 39/4, 39/5 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի և հասարակական համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Սահակյանշին» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

«Սահակյանշին» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղու 12/5, 13, 39, 39/1, 39/2, 39/3, 39/4, 39/5 հասցեներում կառուցել բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքերով համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված հողամասերում, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 6,428668հա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքն իրենից ներկայացնում է շինություններից ազատ տարածք, որն արևելքից արևմուտք ունի ռելիեֆային մեծ անկում, ուր հողի բերրի շերտի հզորությունը կազմում է 9-10սմ:

Տարածքը գտնվում է Ծիծեռնակաբերդի խճուղի, Լենինգրադյան, Մոնթե Մելքոնյան, տրանսպորտային հանգույցից մոտ 250մ հարավ-արևմտյան ուղղությամբ, մարզահամեգային համալիրից՝ 350մ հեռավորության վրա՝ հարավ-արևմտյան ուղղությամբ: Տարածքի անմիջապես հարևանությամբ Ծիծեռնակաբերդի խճուղին է, կից հողամասերն են մարզահամերգային համալիրի տարածքը և չկառուցապատված այլ հողամասեր:

Նախատեսվում է կառուցել բնակելի համալիր մոտ 9000 բնակչի համար: Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, լանդշաֆտի առանձնահատկություններով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական

լուսավորության հաշվարկներով: Շենքերի առավելագույն բարձրությունը նախատեսվում է 15 հարկ:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 64.286,68քմ

Կառուցապատման մակերես – 21.256քմ

Կանաչապատման մակերես – 38.400քմ

Ավտոմեքենաների ճանապարհներ – 4.644քմ

Բնակարանների թիվ – 2.704

Ստորգետնյա ավտոկայանտեղի – 4.031 մեքենա:

Էլեկտրամատակարարումը իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ միանալով Ծիծեռնակաբերդի խճուղու մոտակա 10 կվ բաշխիչ սարքվածքին:

Գազամատակարարումը նախատեսված է իրականացնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ միանալով Ծիծեռնակաբերդի խճուղով անցնող 250մմ տրամագծով գազատարին:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի համապատասխան՝ միանալով մոտակա քաղաքային ջրագծին և կոյուղագծին:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 5 տարի:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Տեխնիկական նպատակով և աշխատողների կենցաղային ու խմելու նպատակով ջուրը մատակարարվելու է տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (420 մարդ) և կազմել 12.866մ^3/շին.ժամ կամ 9,9մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1.440մ^3/շին.ժամ կամ 1,2մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 14.306մ^3/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 470.000մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 94.000մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, 376.000մ^3 գրունտի մի մասը կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած մասը նախատեսվում է կրկնակի օգտագործել «Սահակյանշին» ՓԲԸ պատկանող արտադրական տեղամասում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ շինարարական աղբն է՝ 120մ^3: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կհավաքվի համապատասխան աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– փոշենստեցման նպատակով ջրցանի իրականացում,

– ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

– մեքենաների արագության սահմանափակում՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով,

– շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայի և ավտոտրանսպորտի պարբերաբար ստուգում և կարգաբերում,

– շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստների տեղադրում բետոնապատ մակերեսի վրա՝ բացառելով դրանց արտահոսքը,

– ծածկված թափքերով բեռնատարներով գրունտի և սորուն նյութերի տեղափոխում (ավազ, խիճ, հող և այլն),

– փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

– տարածքի հոսքաջրերի միավորում մեկ բակային ցանցում և միացում գոյություն ունեցող հեղեղատար ցանցին,

– շինարարական աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին,

– աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվող գումարը կազմում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի: Կանաչապատման նպատակով կօգտագործվի շինարարական աշխատանքներից առաջացող 6.000խմ ծավալով հողի բերրի շերտը, որի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և օգտագործումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են հետևյալ ծառաթփատեսակները՝ ակացիա՝ 188 հատ, բազմամյա թփուտ՝ 105 հատ, բազմամյա ծաղիկներ՝ 44 հատ, բարդի՝ 31 հատ, գրաբ՝ 69 հատ, թխկի շաքարային՝ 5 հատ, թխկի սրածայր՝ 62 հատ, կեչի՝ 54 հատ, շագանակենի՝ 28 հատ, մշտադալար թփուտ՝ 113 հատ, միամյա ծաղիկներ՝ 44 հատ, հացենի՝ 47 հատ, ուռենի՝ 39 հատ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է ոռոգման ցանցի միջոցով՝ ոռոգման ավտոմատ համակարգով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Անհրաժեշտ է ապահովել քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 նորմերի և պահանջների պահպանումը:

- Ծրագրի շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում պատմամշակութային և հնագիտական շերտերի ի հայտ գալու դեպքում՝ հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացություն ստանալուց հետո:

- Անհրաժեշտ է կանաչապատման աշխատանքներն իրականացնել հայտում ամրագրված տվյալների և դենդրոնախագծի համաձայն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սահակյանշին» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղու 12/5, 13, 39, 39/1, 39/2, 39/3, 39/4, 39/5 հասցեներում նախատեսվող բնակելի և հասարակական համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Ալեքսանյան